


Հովհաննէս Դոնոսեան

ՄԱՅՐԱԿԱՆ



891.99-

7-79

ԴՆՏՆԱՏ

8205 DEC 8 '51



JUL 2013

26 NOV 2013

891.99

ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Պ-ԴԳ


Մ Ա Յ Ր Ա Կ Ա Ն

1009
39522

4017

00

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1936



51313

ԱՐՄԱՆԱԳԱԾ Ե ԶՍԽԶ ԺՈՂԿՈՄԻՏԻՆԵ ԿԻՐ
ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԿՈՆԿՐԵՐԻ 3-րդ մրցանակին

ՆՎԵՐ ԲԱԼԻԿԻՍ՝
ԿԻՄԻԿԻՍ

Պատ. խմբ. [REDACTED]
Տեխ. խմբ. [REDACTED]
Արքագրի՝ ՈՆՆԻԿ ԳԱՍԱՐՉՅԱՆ

Պետերատի ապարան
Գլավիտի լիազոր 401, պատվեր № 142
Հրամ. № 3101, տիրոժ 3000



ՄԱՆԿԻԿԻՍ, ՎՈՐ ՊԵՏՔ Ե ԳՈՐ

Դու շունչ առար, կայտառ մանկիկ,
Սրտիս տակին կծկըված՝
Մի մարգարիտ շողուն, անգին,
Մութ խեփորում թագնւած:

Քո հպումը խորքում, այնտեղ,
Թավիշ եր նուրբ և քնքուշ,
Յեւ դյուրին եր խաղըդ անմեղ,
Բեռըդ թեթեւ և անուշ:

Սիրում եյի հաշվել ծածուկ
Ուռլ զարկերը սրտիկիդ,
Շարժումներն այն կամացուկ,
Չարաճճի թաթիկիդ:

Ճաճանչներից ահա հյուսած
Որորոցը քո փալուն,
Յես անհամբեր կողքին կանգնած,
Սպասում եյի քո գալուն:

Գարնանային մի առավոտ,
Աշխարհ յեկավ իմ բալեն,
Ծաղիկներից անուշահոտ,
Յես անկողին եմ փռել:

Յես խնդրեցի փախչող հովին,
Քեզ որորել մեղմաբար,
Մով յերկնքի ջինջ կապույտին
Ծածկոց դառնալ քեզ հարմար:

Գիրկս առած քեզ, չերգեցի,
Ողն եր լցվել հանգերով,
Դու ժպտալով ինձ նայեցիր,
Քո նոր բացած աչքերով:

Հետո բալիս սեղմած կրծքիս,
Յերգ հյուսեցի պայքարի,
Վոր կաթի հետ մեկտեղ ծծի
Մի կամք ուժեղ և արի:

Դու կյանք առար կայտառ մանկիկ,
Սրտիս տակին կծկըված,
Մի մարգարիտ շողուն, անգին,
Մութ խեփորում թաղնված:



ՈՐՈՐՈՑԻ ՅԵՐԳԸ

Քնիր, բալիկ,
Նանի, նանիկ,
Յես յերգ կասեմ քեզ հանգով,
Շորորալով
Ճամբով սովոր
Քունն ե իջնում նաղանքով:

Տես, յերկնքում
Աստղն ե քնում,
Ամպն վերմակը ծածկած,
Ծաղկանց միջում,
Հովն ե ննջում,
Շարժուն թևերը ծալած:

Հեռուներում
Գետն ե հեռում,
Լուսնի արծաթը մեջքին,

Առխոջալով,
Կարկաշելով,
Որոր ասում փոքրիկին:

Աչիկներիդ,
Թարթիչներիդ,
Քունը շուտով կթառի,
Յերազներով
Լիքը կողով
Որորոցիդ կը կախի:

Կմեծանաս,
Կհեռանաս,
Բռնած կյանքի նոր ուղին,
Մտքով հավետ
Յես ել քեզ հետ,
Միշտ կլինեմ քո կողքին:

Յես քեզ կոգնեմ,
Վեր մագլցել,
Տիրել կապուշտ չերկնի,
Յեմ կառուցել,
Վեր բարձրացնել
Շողուն շենքը մեր կյանքի:

Նոր հանգերով,
Յեմ յերգերով
Քեզ թեմ կտամ իմ բալա,
Քնիք, մանկիկ,
Նանի, նանիկ,
Բալես քնել ե ահա:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Ամառ եր արև եր,
Կանաչ մի պուրակ,
Բալիկս նստել եր
Ծնկանս վրա:

Արևը ձգվել եր,
Կապույտ լալն գորգին,
Սանրել եր, հլուսել եր
Մազերը վոսկի:

Հասմիկը բուրում եր
Յեվ հովն եր յերգում,
Նա ջերմ համբուրում եր,
Բալին իմ գանգուր:

Ու մեկ ել իջնում ե,
Ծնկից իմ բալեն,
Կամաց յերերում ե,
Սկսում ե քալել:

Փոխում ե տոտիկը,
Ու մեկ ել, ահա,
Քայլում ե փոքրիկը,
Քայլում ե անահ:

Ժպտում ե ծաղկանցը,
Վոսկուն արևի,
Բացվել ե դիմացը,
Աշխարհը հիմի:

Շարժվում են խոտերը,
Շարժվում են, խշշում,
Բալիս թուխ տոտերը
Գըզվում են, շոյում:

Ամառ եր, արև եր,
Կանաչ մի պուրակ,
Բալիկս քայլում եր
Վստահ և արագ:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Ամառ եր արև եր,
Կանաչ մի պուրակ,
Բալիկս նստել եր
Ծնկանս վրա:

Արևը ձգվել եր,
Կապույտ լայն գորգին,
Սանրել եր, հլուսել եր
Մազերը վոսկի:

Հասմիկը բուրում եր
Յեվ հովն եր լերգում,
Նա ջերմ համբուրում եր,
Բալին իմ գանգուր:

Ու մեկ ել իջնում ե,
Ծնկից իմ բալեն,
Կամաց յերերում ե,
Սկսում ե քալել:

Փոխում ե տոտիկը,
Ու մեկ ել, ահա,
Քայլում ե փոքրիկը,
Քայլում ե առան:

Ժպտում ե ծաղկանցը,
Վոսկուն արևի,
Բացվել ե դիմացը,
Աշխարհը հիմի:

Շարժվում են խոտերը,
Շարժվում են, խշշում,
Բալիս թուխ տոտերը
Գրգռում են, շոյում:

Ամառ եր, արև եր,
Կանաչ մի պուրակ,
Բալիկս քայլում եր
Վստահ և արագ:

ՏԱՏԻԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Հիշում եմ, ձմեռ եր, և ձյուն եր, քամի,
 Վառվող վառարանը հիշում եմ հիմի,
 Կրակի դեմ բալիկս—և բոցը նարինջ,
 Փայլում են բոցի դեմ աչերը քո ջինջ:
 Նստել ես, փարվել ես սիրով տատիկին,
 Տատիկը հեքիաթ է պատմում փոքրիկին.
 «Անտառ ե, կեսոռ ե, և գետն ե խշշում,
 Զուգվել են ծառերը, հաքել են նախշուն:
 Ճոճվում են ծառերը, ճոճվում են հանգարտ,
 Գետի մոտ կանգնել և փոքրիկ մի պախրա.
 Պախրան կռանում ե, խմում ե ջրից:
 Ուրախ փնչացնում ե, խմում ե նորից:
 Խշշում են խոտերը, խշշում կամացուկ,
 Մի գայլ թագնվել և խոտի մեջ ծածուկ.
 Հանկարծ նա ցատկում ե, հասնում և պախրին,
 Պախրան բռնաչում և ընկնում և կողքի.
 Բայց մայրը մոտիկ եր, մայրիկը նրա,
 Ահա նա թռչում և քամուց ել արագ,
 Ուժեղ չեղջյուրները դնում և գործի,

Հաղթված և չար գայլը, ընկած և խոտին:
 Ազատ և փոքրիկը, փրկված և պախրան,
 Լիզում ե, շոյում ե մայրիկը նրան:
 Անտառ եր, կեսոռ եր, և գետն եր խշշում,
 Մի մայր գուրգուրում եր բալին իր նախշուն:—
 Յեվ վերջ պատմութանը...Տատիկը լռեց,
 Վառվող վառարանը թշշաց և սառեց:
 Բայց բոցը փայլում և բալիս աչերում,
 Լսում և նա կանչը կյանքի շառաչուն:
 Սեղմում և թաթիկը, սեղմում և արի,
 Պատրաստ և կյանքում նա դիմել պայքարի...
 Թշշաց վառարանը, հանգավ ուժասպառ,
 Բալիս սրտիկումը մի բոց կա անմար:

Մ Ո Յ Ր Հ

Ծաղկել են ծառերն ամենուր,
Քեզ նման, իմ փոքրիկ ժիր գարուն...
Արևն է քեզ ժպտում կամացուկ,
Ու քեզ պես թափնվում է ծածուկ:
Աճում ես, որեց որ մեծանում,
Նոր կյանքի դարբասին մոտենում.
Քայլերը քո փոքրիկ վոտների
Հաստատ են հնչում մայրերին:
Անհամբեր, այդ ճկուն մատներով
Դարբասն ես դու ծեծում անվրդով,
Հասնելով լալն շեմքին նոր կյանքի,
Ել կարոտ չես դու իմ գգվանքի:
Նոր մայր է քեզ այստեղ հանդիպում,
«Հոկտեմբեր» են նրան անվանում,
Արևից ել նա ջերմ է ու սիրող
Քալվածքը և՛ ուժեղ, և՛ հաղթող...
Յես այսօր քեզ նրան եմ հանձնում,
Իմ կայտառ, իմ փոքրիկ ժիր գարուն:

1009
29522
4017


Փ Ո Ղ Կ Ա Պ Հ

Աշնանային մի առավոտ,
Յողաթաթախ ժպտերես,
Ճամբաներով լալն, արևոտ
Ինձ մոտ յեկավ իմ բալես:

Կրծքին փողկապ, ծփան շողուն,
Նման կարմիր զուլջ թևի,
Բալես յեկավ, հագած նախշուն,
Յեկավ, կանգնեց բարևի:

Նա թուխ ձեռքը վերև պարզեց,
Դեմքին ալը փողկապի,
Յեվ մայրիկին իր վողջունեց,
Այնպես վստահ ու արի...

Տոն եր ուրախ և ցնձագին,
Նա դարձել եր պիտներ,
Իսկ փողկապի վառ հանգուլջին
Վասկե մի շող եր թառել:



Բալես կաճի և բոլ կառնի,
Կալայքարի անդադրում,
Իր փողկապը դրոշ կանի,
Կծածանի վերևում:

Յեվ թե լինի այդ հարկավոր,
Ցողաթաթախ, ժպտերես,
Աշնանային մի առավոտ,
Կյանքը կտա իմ բալես:



Չ Մ Ե Ռ Ը

Շարան, շարան, թևատարած,
Ճովողելով, չերգելով,
Տարիները թռչուն դառած,
Կանցնեն ուրախ չերամով:

Յեվ ձյուն կիջնի իմ մազերին,
Կիջնի ճամբին իմ սովոր,
Կծանրանա իմ ոտերին
Մի նոր ձմեռ ահավոր:

Բալես կգա ինձ տեսության,
Դեմքին քնքուշ աղվամաղ,
Ինձ կալարդի յերջանկության,
Ջահեղության լիքը թառ:

Հաղթ կառուցման հսկա վայրից
Նա կը բերի ինձ նվեր,
Այն շողացող հեռուներից,
Մի նոր ծագող ջերմ արև:



Յե՛վ կանգ կառնի, ե՛լ չի թռչնի
Սրտիս շուշանը փակվող,
Բալիս մազին փայլուն փողի,
Փռչին կյանքի կառուցվող:

Յերբ հաղթության մի ճոխ պսակ
Կղարդարի իմ բալին,
Այն ժամ մազիս ձյունն սպիտակ
Կտաքանա, կհալի:

Յե՛վ որերս թեատարած,
Ճովոզելով, յերգելով,
Զլունափետուր թռչուն դառած,
Կանցնեն ուրախ յերամով:



<< Ազգային գրադարան



NL0357291

9122 404.

268

51313

Р. ПОГОСЯН
МАТЕРИНСКОЕ
ГИЗ СССР 1936 ЗРЯВАНЬ